**Հայտարարություն**
**ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը հրապարակում է սույն հայտարարությունը փորձագետ ներգրավելու վերաբերյալ**

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատանքներում փորձագետ ներգրավելու մասին:

**Աշխատանքների համառոտ նկարագիրը.**

Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականացման ապահովում, մասնավորապես «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» մրցաշարերին Սյունիքի մարզի մասնակցության ապահովում, մրցաշարերի համայնքային և մարզային փուլերի կազմակերպում, համապատասխան հաշվետվությունների կազմում և ներկայացում.

**Փորձագետ ներգրավելու ժամկետը՝** Պայմանագիրը կնքվում է **մեկ տարի ժամկետով:**

**Փորձագետի պարտականությունները՝** Իրականացնում է հանրապետական մարզական և մշակութային միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի անցկացումը՝ «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» մրցաշարերի համայնքային և մարզային փուլերի կազմակերպում, «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» մրցաշարերի հանրապետական փուլին մարզի մասնակցության ապահովում, Համապատասխան հաշվետվությունների կազմում և ներկայացում:

**Փորձագետին ներկայացվող պահանջները՝**

- ունի բարձրագույն կրթություն.
- ունի հանրային ծառայության 2 տարվա կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.
- ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Վարձատրության չափը՝** Պայմանագրային:

**Փորձագետի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը**, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փաորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք:

**Ընտրությունը կատարելու եղանակը՝** դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

**Դիմող ՀՀ քաղաքացիները Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (ք. Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակներով).**

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ, անձնակազմի կառավարման բաժին):

**Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար քաղաքացիները կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ (0285) 44275 հեռախոսահամարով:

**Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 16/04/2025թ.:**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Է. Մարտիրոսյանին

քաղաքացի_____ -ից
(դիմողի անունը, ազգանունը)

_____
դիմողի հասցեն

_____
Էլեկտրոնային հասցեն

_____
հեռախոսահամարը

**ԴԻՄՈՒՄ**

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ.
5. Այլ _____ էջ.

Առդիր՝ _____էջ.

Դիմող՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«_____»_____ 2025թ.

Նախազգուշացված եմ՝ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: